

1915 թ. հայոց ցեղասպանության ճանաչման և ոգեկոչման Ապրիլ 24 Կոմիտե

«Ապրիլ 24 Կոմիտե»-ն Հոլանդահայ Կազմակերպությունների Միության հանձնախմբերից է

Տեղեկություններ՝ armeensefederatie@hotmail.com

ԱԶԴ

Ա. 21 ԱՊՐԻԼԻ - ՑՈՒՅՑ ՀԱԱԳԱՅՈՒՄ

Ի՞նչ՝ Ցույց ակամավոր անձանց ելույթներով, դիմումների և նամակների ներկայացում Հոլանդիայի խորհրդարանի նախագահին, վարչապետին և թուրքական դեսպանությանը

Ելույթ կունենան՝ Լ. Վան Դեյկը, Հ. Վան Բոմելը, Ֆ. Քարիմին, Բ. Կուդերսը և այլ անձեր

Ե՞րբ՝ Չորեքշաբթի, 21 ապրիլի 2004, ժամը 12-ից մինչև 16-ը

Որտե՞ղ՝ Սկիզբը՝ Հաագայի Պլեյն հրապարակ, խորհրդարանի շենքի դիմաց, այնուհետև քայլարշավ դեպի թուրքական դեսպանատուն, ավարտը՝ Մալիվելդ դաշտ

Ավտոբուսով Հաագա գնալու համար դիմել՝ **Ալմելոյի «Երևան», Ամերսֆորտի «Հայ Հոլանդական Միություն», Ամստերդամի «Արարատ» և Ասենի «Արմենիա»** հայկական կազմակերպություններին:

Բ. 24 ԱՊՐԻԼԻ - ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԱՍԵՆՈՒՄ

Ի՞նչ՝ Հանդիսավոր պսակադրում Ասեն քաղաքի հայոց հուշարձանին, ոգեկոչման նիստ գերեզմանատան սրահում

Ելույթ կունենան՝ Ֆ. դե Յոնգը, Պ. Մխեֆերը և Վիգեն Չիտեչյանը
Համերգ Իլդա Միմոնյանի և այլոց կատարմամբ

Ե՞րբ՝ Շաբաթ, 24 ապրիլի 2004, ժամը 13-ից մինչև 16-ը

Որտե՞ղ՝ Ասեն քաղաքի Դե Բոսկամպ գերեզմանատուն
Հասցե՝ Boskamp 5 - Assen

Ավտոբուսով Ասեն գնալու համար դիմել՝ **Ալմելոյի «Երևան», Ամերսֆորտի «Հայ Հոլանդական Միություն», Ամստերդամի «Արարատ», Հաագայի «Արվյան» և Ռոտերդամի «Սասուն»** հայկական կազմակերպություններին:

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Մոտակա Եվրոմիության գազափի շրջանակում, որտեղ հոլանդական նախագահությամբ որոշվելու է Եվրոմիության մեջ Թուրքիայի անդամակցության բանակցությունների սկսման մասին, Ապրիլ 24 Կոմիտեն կազմակերպում է մի շարք միջոցառումներ, նպատակ ունենալով հոլանդական հասարակայնության և իշխանությունների ուշադրությանը ներկայացնել հայոց ցեղասպանության կապը Եվրոմիության մեջ Թուրքիայի անդամակցության հետ:

Որպես առաջին միջոցառում, 2004 թ. ապրիլի 21-ին Հաագայում տեղի կունենա ցույց, որի ընթացքում դիմումներ կներկայացվեն Հոլանդիայի խորհրդարանի նախագահին, կառավարությանը և թուրքական դեսպանությանը: Ապրիլի 24-ին կկայանա Մեծ Եղեռնի հանդիսավոր ոգեկոչում Եղեռնի զոհերի հուշարձանի մոտ՝ Ասեն քաղաքում:

Ապրիլ 24 Կոմիտեն կոչ է անում բոլորին մասնակցել այս միջոցառումներին՝ նեցուկ կանգնելով մեր արդարացի պահանջներին: Խնդրում ենք տեղեկացնել այս միջոցառումների մասին ձեր բարեկամներին և բոլոր նրանց ում համար թանկ է Հայկական Հարցը: